

# ԱՅՀԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

ԱԴԱՆԱՅԻ ՎԻԼԱՅԵԹԸ

Կ Ա Ս

Կ Ի Լ Ի Կ Ի Ը

Կոնֆետից (Խկոնիսն) արևմուտք՝ հիւղերի և խրճիթների նօսր խմբերը, որոնց քաղաք անունն են տալիս, յաջորդաբար շարուած են Տաւրոսի հիւսիսային ստորոտումն ուր լեռներից իջնող մաքուր ջրերի առուակները գեռ չեն ցամաքել և տենդերի եղանակին բնիկները՝ սահմանակից լինելով բարձր արօտատեղերին, ամառը սարը բարձրանալու դիւրութիւնն ունին։ Երբեմն կարամանեան նահանգի մայրաքաղաք կարամանը գտնւումէ արդէն գրեթէ լեռների սրտումն 1900 մետր բարձրութեան վրայ ծովի մակերևոյթից։ Առակլին (Կռէկլի, Հերակլիա) հազիւ 1000 մետր բարձրութեան վրայ գտնուի, բայց իւր տները խմբուած են մի ըլքի վրայ, որ ճահճային սահմանագծից բարձր է։ Կարաբունար կամ Առ-Աղբիւրը բոլորովին անբնակ է մնում ամառը, բնակիչները թողնումեն լճային փոսորակի աղի և բորակի շահագործութիւնը, բարձրանալով կարաջա-դաղի եայլան երը։ Վերջապէս Նիգդէ'ն (Նիկտէ), աւազանի արևելեան ծայրումն մօտ 1500 մետր բարձրութիւն ունի և գտնւումէ Ալա-դաղի (Ալահ-դաղ) հանդիպագօտու ոտքումն Ոչ հետու կանգնած է Կըզ-հիսար, Աղջկայ ամրոցը կամ Գիլիսէ-հիսար, «Եկեղեցու ամրոցը» «Շամիրամի

իմուլու վրայ, ուր շինուած էր նախկին Տիանան, Ապոլոնիոս  
մօգի հայրենիքը: Համիլտոն հետաքննին ճանապարհորդը կարո-  
ղացաւ որոշել Տիանայի դիրքը գտնելով այն ցայտող ազդիւրը,  
որը հին հեղինակները նկարագրում են Ասմարէոս անունով: Այս  
ակը, որ նուիրուած էր Արամազդին, մի սառնորակ՝ աղտաղի,  
թեթևակի ծծմբային ջրաւազան է, որի կեզրոնական շատրուա-  
նը ձգումէ մօտ 50 հարիւրամետր մակերեսոյթից բարձր, ա-  
ռանց երբեք աւազանից գուրս զեղանելու: Անտարակոյս այս  
ջրաւազանը նոյն կազմուածքն ունի, ինչ որ մեր սովորական  
շատրուանները. հեղուկը գուրս է ցայտում կեզրոնական մի բա-  
ցուածքից և գուրս ծորում յատակի ռեղքուածքով: Հին ժա-  
մանակներից ի վեր Խկոնիոնից Տիանա ձգուող առևտրական և  
ռազմական ճանապարհը կորանումէ աղեղնաձև՝ անցնելով լեռ-  
ների ստորոտից՝ Լարանդայով և Կիւրիստրայով, այն է՝ Կարա-  
մանով և Առակլի՞ով: Աւելի վեր՝ Հիւսիսում՝ աղի ճահիճները,  
պաշարեղէնի և մաքուր ջրի պակասութիւնը ճանապարհը տա-  
ժանելի են դարձնում և գրեթէ անկարելի դարձնում մեծ բազ-  
մութեամբ և այդտեղով ճանապարհորդելը: Այսպիսով կատարե-  
լապէս զուգահեռական են դառնում միմեանց ծովափի գծագրու-  
թիւնը, եղերական լեռների կատարները և վերին բարձրաւան-  
դակների գլխաւոր ճանապարհը: Այս գաւառներում անգլիացի  
ճանապարհորդ Դեւիսը (Davis) նորերս գտել է հետոիտեան ար-  
ձանագրութիւններ:

Ներքին Անատոլիայից անջատուած բարձր լեռներով Քարային  
Վիլիկիայի փոքրիկ նաւահանգիստները ջունին առաջուայ գործ-  
նէութիւնը, երբ բազմամարդ Կիարոսի վաճառականութեամբ էին  
փարթամացած: Ալայան, նախկին Կորակեսիոնը մի կուչ եկած  
գիւղ է Կղզային ժայռի ստորոտում և մայրցամաքի հետ միա-  
նումէ մի աւազային պարանոցավ: ԱԵլինտին, յոյների ՍԵլինոսը,  
մի խեղճ գիւղակ է: Անեմուռիոնը, որ գտնւումէ Փոքր Ասիայի  
ամենահարաւային հրուանգանի վրայ, մի ընդարձակ գերեզմանոց  
է միացն, իսկ Անամուռ (Անեմուռ) գիւղաքաղաքը՝ սուերակներից  
փոքր ինչ հեռուն՝ շինուած է մի հեղեղատի բերանում: Աւելի

Զալինարէ փոքրիկ ծովածոցը, հների կելենդրիսը, կիալրոս կղզին հեռուն գնալու սովորական նաւահանգիստն է։ Պրավանսալ նաւահանգստի քարաժայոի վրայ, որ երբեմն ամրացրած էր Հռոդոսի ասպետներից, այլևս ոչ ոք չէ բնակւում։ Նախկին Սիլեկիան (Սելեկէ)՝ Գեօկ-Առուի-Կալիկադնոսի գետաքերանում տնակների մի կոյտ է միայն։

Առևտրական շարժումը ստիպուած էր տեղափոխութիւն գէպի արևելք՝ Դաշտային Կիլիկիայի ծովափունքը, ուր գալիս հանգ շումէ Փոքր Ասիայի անկիւնագծային ճանապարհը և ուր բերրի գաշտեր և հովիտներ մշակութեան յարմար ընդարձակ գօտի ունին։ Այս գաւառի վաճառաշահ նաւահանգիստը՝ Մերսինա՞ն այս գարի կիսին խրճիթների մի փոքրիկ խումբ էր, շրջապատառած միտենիներով, որից և ստացաւ իւր անունը, իսկ այժմն մի վաճառաշահ քաղաք է և իւր նաւահանգիստը՝ որ չափազանց ենթարկուած է ծովամիջի քամիներին, պաշտպանուած է արուեստական քարափներով (զամ) և թումբերով <sup>4)</sup>։ Քաղաքը մասամբ շինուած է մարմարի կտորներով, որ լնկած էին հողի երեսին հին յունական քաղաքի վլատակներից։ Մի քանի քիլոմետր արևմուտք ուրիշ աւերակներ ցոյց են տալիս Արգիացիների Սովորական տեղը, ուր խօսւում էր այն աղջատ լեզուն, որից առնուած՝ խօսրի սխալ և անկանոն դարձուածները կոչւում են «Առլէսիզմ»—Սուաբան ութիւն։ Աւելի հեռուն երեսում են Պոմպէուալուսի հռոմէական սիւնաշարերը, որ առաջնորդում էին գէպի մի ձռւաձեւ նաւահանգիստ, որի պատճէները շատ լաւ պահպանուել են, բայց տիղմը լցրել է նաւահանգիստը և ծովափի հոգակոյտերը երկարել վակել են խորշի մուտքը։ Շատ կէտերից հետաքրքրական յիշատակարան է Գիրէկլի գաշտը կամ «կանգուն քարը», որ մի ահագին կոթող է, թերեւս անդրապատմական դարերում կանգնեցրած։ Լանգլուայի ասելով՝ այս վէմը, որի ստորին մասը մաշուել է ուղտերի քսուելով և քորուելով, 15 մետր

4) Մերսինա նաւահանգստի առևտրական շարժումը 1880 ին—110.000 տակառաչափ։

բարձրութիւն ունի, իսկ զանգուածի ծաւալը՝ 120 խորանարդ մետր<sup>1</sup>), կշռումէ առնուազն 300 տակառաչափ և կարող է համեմատուիլ Երիտանիայի վիթխարի մեծավէմերին (մեգալիթ): Արդեօք սա մի մենչիք է կամ գուցէ այն միապաղազ կոթողներից, որ սովորաբար կանգնեցնումէին Փիւնիկեցիները զոյգ զոյգ իրենց տաճարների մուտքի առաջ<sup>2</sup>):

Մի նոր փառաւոր ճանապարհ միացնումէ Մերսինան Տարան և Աղանա քաղաքներին: Տարսոնը գտնուումէ Կիւղնոսի կամ Տարսանի գետի աջ ափում, Բուլգար-դաղի հանդիպագուոտ վերջին սպառուող զառիվայրերի վրայ: Փոքր Ասիայի համբաւաւոր քաղաքներից մէկն է, ամենամեծ հնութեամբ պարծեցող: Արևելքան մի աւանդութեան նայած, այս քաղաքի բռնած աեղը առաջին դաշտն էր, որ ցամաքեց երբ որ ջրհեղեղի ջրերը յետ քաշուեցան: Քանի որ սիկահաղը չէր լցրել նաւահանգիստը և Կիւղնոսը դեռ նաւարկիլ էր՝ Տարսոնը հիանալի դիրք ունէր փաճառականութեան կեդրօնալայր գառնալու համար: Ասորիքի և Փոքրը Ասիայի միջև՝ Կիլիկիայի նաւահանգիստներով, որոնց մուտքն էր պաշտպանում: Կեսարի և Օգոստոսի ժամանակ նա դիմացը ծովի միւս կողմում գտնուող Ալեքսանդրիայի ախոյեանն էր: Խըր դպրոցները աշխարհի ամենալաւերն էին համարւում: Մինչև անգամ Աթենքի դպրոցներից բարձր: Խըր իմաստաէրները գնում էին Արևմուտքում իրենց գիտութիւն տարածելու<sup>3</sup>): Քաղաքը շատ ճոխացաւ և շքեղացաւ, Մարկոս Անտոնինոսը նրան խըր ասիական կայսերութեան մայրաքաղաքը գալձրեց, ուր և ամուռնացաւ Կէռովարայի հետ: Յուլիոսը թաղուեց Տարսոնում: Բայց պատերազմները աւերակ դարձրին այս քաղաքը, որի միջով հոռոգ գետը հեռացաւ դէպի արևելք և դադարեց նաւարկելի լինելուց, նաւահանգիստը լցուեց տղմով և Տարսոնը անջատուեց

1) Victor Langlois, Voyage dans la Cilicie.

2) G. Perrot, Ճեռագիր:

3) Henzy, Académie des Inscriptions et Belles-lettres, 7 juillet, 1876.

ծովից: Իւր նախկին վառքից ոչ մի հետք չէ մնացել՝ հազիւ երբեմն բրդի տակ գտնուումեն հնագարեան մնացորդներ: Ամենահետաքրքրական շինուածքը մի մզկիթ է, որ ըստ աւանդութեան շինուած է ճիշտ այնուեղում: Ուր ծնուեց «Հեթանոսների առաքեալլ»՝ Պօղոսը: Պարիսպների մօտ գտնուել է մի ահագին մթերանոց կաւաշէն, թրծուն, փոքրիկ, ուխտանուէր արձանների—թերափների, հաւանականաբար այգտեղում գտնուում էր այս սրբազն առարկաների մի գործարան<sup>1)</sup>: Մեկքայից և Երուսաղէմից յետոյ մուսուլմանների ամենագլուխաւոր ուխտատեղիներից մէկը Տարսոնի շրջակայքում մի քարայր է, այն բազմաթիւ քարանձաւներից մին, ուր ըստ աւանդութեան բնակուեցին «Եօթը նուզողները»<sup>2)</sup>:

Ամառը քաղաքը շատ վառառողջ է դառնում և կարողաւոր բնակիչները խոյս են տալիս դէպի բուլգար-դաշի հուիսոնները, իշմէ՛ի ջերմուկները, Կողնէ, Նեմրուն, Դիւլէկ-բազար, Կիլիկեան փռների մօտ: Տարսոնի գեղեցկութիւնը իւր ընդարձակ պարտէզըն է՝ կանաչագեղ գօտին, որով շրջապատուած է և ուր ցրիւ են լնկած փշրուած կամարներ, կիսակործան սիւներ, որ հռոկմէական ջրմուզի մնացորդներն են: Բայց այս բոլոր աւերակները չնշին են երեւում: Երբ որ մի ստուերախիտ շաւիղի գարձուածում յանկարծ մի ահագին քարի՝ «Թաւալուած վէմի» Դէօնիւկ-տաշի դիմացն ես գալիս: Այս լայնածաւալ քառանկիւն քարաշէնքը, որի մէջը գատարի է, թւումէ մի վիթխարի միապաղադ զանգուած: Կիւգնոսի ափից նայած՝ կիսպարիսների և պտղասու ծառերի ճիւղերի միջից այս «քարը» նման է աւազաքարի ժայռի կարծես բնութեան գործը լինի, ինչպէս այդ յաճախ պատհումէ երկրաբանական ուժերից յեղաշրջուած երկրներում: Այս տարօրինակ շինուածքը՝ ակներեւ է՝ որ շատ հին է և մերձաւորապէս 90 մետր երկարութիւն ունի, առանց հաշուելու կողմնա-

1) Lion Heuzy;—Burckhardt Barker, Lares and Penates.

2) V. Langlais, Ճիշուած:

կի շինուածքները՝ լայնութիւնը 42 մետր է և բարձրութիւնը՝ 8 մետր։ Սպիտակ մարմարի սալերը, որ ծածկում էին պատերի երեսը, ցրուած են գետնի վրայ։ Խնչպէս որ հին դրամներից երեսում է այդ ահազին զանգուածը իրեւ պատուանդան է ծառայել մի թագաւորի արձանին, որ ունեցել է աղեղ և կապարճ և կանգնած է եղել մի խորհրդաւոր և եղջիւրաւոր կենդանու վրայ։ Փորուածքներ կատարուեցան, բայց չյայտնուեց ոչ տարեթիւը և ոչ այդ շինուածքի ինչ բանի համար նշանակուած լինելը։ Ոմանք գիտնականներից համարում են այդ պատզամախօսութեան տեղ։ Հնաբան Լանգլուան հիմնուելով Սորաբոնի մի ասոցուածի վրայ կարծում է թէ այդ առաջին Սարդանարալի, որ կիլիկիա փախաւիւր պետութիւնը կորցնելուց յետոյ, շիրիմը լինի։ Ոնտարակոյս այդ շինուածքի կատարին դրուած էր այն վիթխարի, ասորեստանական ոճով արձանը, ինչպէս որ այդ նկարուած է տարառնական բազմաթիւ դրամների վրայ<sup>1)</sup>։

Ագանան հին Տարսոնից խլեց նրա առեւտրական կարենութեան մի մասը։ Տարսոնի պէս գանուելով ամենաքերրի երկրում, շրջապատուած պարտէզներով, բամբակի և շաքարեղէզնի արտերով սա էլ նմանապէս շինուած է Փոքր Ասիայի անկիւնագծային մեծ ճանապարհի վրայ։ Այստեղում՝ Սարոսը կամ Սիհունը, որ հոսում է գէպի արեւելք, գուրս է գալիս դարեւանդներից և մըտնում է ընդարձակ սիկահողային դաշտը, որ տարէցտարի աճում է, թէեւ ոչ մեծ չափով, կիպրոսի և Ասորիքի ուղղութեամբ։ Իւր՝ և իւր օժանդակների վերին հովիտները մի մի ճանապարհ և անցք են գէպի կեսարիա և կըզըլ-իրմակ։ Միւս կողմից՝ Պիւռամիս կամ Զիհուն գետը այնչափ մօտենում է Աղմանային, որ այս քաղաքը կարող է համարուիլ բնական կեղրոնավայր և հրապարակ այդ գետերի ամբողջ աւազանին։ Այստեղ է վերջանում Եփրամի վերին աւազանի և կիլիկիայի ծովափների պատմական ճանապարհը։ Բացի այս՝ Սիհունը Փոքր Ասիայի գրեթէ բոլոր գետերից այն ա-

1) G. Perrot, Mémoires d'Archéologie, d'Epigraphie et d'Histoire.

ռաւելովթիւնն ունի, որ նաւարկելի է իւր ստորին հոսանքում՝ և կիպրոսում ու ասորիքում բարձուած նաւերը կանգ են առնում քաղաքի գետափի առաջ: Իւր գաշտերի սրազարերութեամբ և ճանապարհների կեղրօնացման շնորհիւ Ադանան դարձել է մեծ առեւտրական կեղրոն և մտածումեն արգէն մի նեղագիծ երկաթուղի շինել 60 քիլոմետր երկարութեամբ, նրան Տարսոնով Մերսինայի նաւահանգստի հետ կապելու համար: Ադանան թէև աւելի առողջ կլիմայ ունի քան թէ Տարսոնը, այսուամենայնիւ վտանգաւոր է այդտեղ մնալը տենդային եղանակին, ուստի և շրջակայ լեռների գիւղերը ամառը լցւումեն եկաւորներով:

Արրոսի վերին հովտում հայկական Հանին քաղաքից գէպի հիւսիս, Սըւաղ (Սերաստիա) և Ադանա նահանգների սահմանագծի վրայ, ոչ հեռի նոր Աղիզիէ քաղաքից, Սար կամ Սարտիրէ փոքրիկ գիւղաքաղաքը, շինուած է նախկին Կոմանայի տեղում: Կոմանան կոչւումէր նաև Հերապոլիս կամ «Սուրբ քաղաք»: Աւերակներին իշխող սարը մինչև այժմն էլ անուանւումէ Կումենէկ-թեփէ, բայց Կոմանայի բուն անունը գեռ ես չէ գտնուել յիշատակարանների վրայ: Բոլոր շինութիւնները, տաճարները, թատրոնները, ասպարէզները, մրցարանները (գիմնազիոնները) հելլեն-հռոմէական ժամանակից են մնացած, սակայն որբարանները, երեկի սրբադան սովորութեանց աւանդապահ մնալով, աւելի եգիպտական քան թէ յունական կերպարանները ունին: Բուն տաճարը ոչ մի սիւն չունի և քրմերի բնակարանները շրջապատումէն նրան առանց ճարտարապետական որ և է ամբողջութիւն կազմելու: Քաղաքին նայող լեռների ուղղաձիգ զառիվայրերի վրայ բացուած կան քարանձաւներ, իսկ ներքեւում հարուստ դաշտն է վտուած, որ Ստրաբոնի ժամանակ մշակւումէր վեց հազար ստրուկներով<sup>1)</sup>:

Սարոսի և Պիւռամոսի վերին հովիաններում կազմակերպուած թուրքմանական կողան-օղլու և Մենեմենց-օղլու իշխանութիւնները կորցրին իրենց անկախութիւնը: Դեռ այս դարի կիսին նը-

1) Korolidis, Η παρανάνων և իւր աւելքակները (նոր շունարէն):

բանք ենթարկւումէին թուրք տէրութեան գերիշանութեանը միմիայն աւտոտական հպատակութեամբ:

Զիհունի վերին աւազանի գլխաւոր քաղաքն է Ալբիստանը, որ յաճախակի անուանւումէ բառախաղով նաև Էլ-բոստան, այն է պարտէզ: Իսկ որ նա թաղուած է կանացութեան մէջ: Ընդարձակ և լաւ ոռոգուած գուրանը, ուր մեռնում—վերջանումեն արջակայ լեռների գարատավների վերջին մեզմ ալիքները, թւում է նախասահմանուած մի մեծ քաղաքատեղ լինելու վերին Եփրատի և ծովի առեւտրի համար: Այս դաշտումն են միանում Զիհունի բոլոր վերին օժանդակները, որ յետոյ սեղմուելով անթիւ կրծերում անցնումեն Աղիբ-դաղի տհագին խորածորով: Բայց բնիկների համար այս հեղեղատներից և ոչ մին բուն գետը չէ: Նրանք, ինչպէս և ամեն ժողովուրդ, բնազգմամբ նախապատուելով մշտաբուխ աղբիւրները, Զիհունի բուն ակն են համարում մի փոքրիկ ջրաւազան, ուր զեռումեն խորին ճեղքուածքներից գուրս ցայտող ջրերը, առանց աւելանալու կամ նուազելու, և գալիս ջրումեն պարտէզները: Ալբիստանում կան մի քանի հայ ընտանիք, իսկ հարաւ-արևմտքում մի հայկական դաշնակցութիւն՝ բաղկացած վեց փոքրիկ հասարակապետական հասարակութիւններից պահպանուել է գրեթէ մինչեւ մեր օրերը Զէլլթունի կամ «Զիթենիների» բարձր հովտում: Թէև այդ լեռնային երկրում որ տռնուազն 1500 մետր բարձրութիւն ունի, ձիթենիներ չեն բուսնում: Գրեթէ գլխովին վատթարացած—սորիացած հայկական աշխարհում այս ազատ լեռնացիների հասարակութիւնը մի բաշառիկ երեսյթ է, լեռնացիների, որ դարերով պահպանել են իրենց անկախութիւնը: Մերձաւորապէս տասն հազար հոգու չափ այս կատարելապէս զինավարժ Հայկեանները ամրացրել են իրենց երկիրը կրծերում շինուած մի քանի բերդերով և կար ժամանակ որ ոչ մի մասսուլմանի չէին թոյլ տալիս իրենց մօտ ներս մոնելու: Ալբիստանի վաշային ոչ մի հարկ չէին տալիս բացի դաշտավայրում մշտակած արտերի վարձից<sup>1)</sup>:

1) Carl Ritter, Asien, vol. XIX.

Մարաշը՝ որի բնակիչների կէս մասը հայեր են, յենուած է Ախրը-գաղի հանգիպագօտուն, որ իշխումէ Աղ-սուի և Զիհունի գետախառնուրդին, ճիշտ այն տեղում ուր Զիհունը դուրս է պրծնում իւր մեծ խորածորից: Մարաշը արուեստաշահ քաղաք է, այդտեղի կանայք կտաւեղէններ են գործում և արծաթ ու ոսկով բանուած կտորներ: Ամառը վիլայէթի ժամանակաւոր մայրաքաղաքն է գառնում: Այստեղ է գալիս փաշան եայլա, երբ որ շոգերից ստիպուած թողնումէ Աղանան՝ Պշտապ: Հարաւարեմուտքում՝ Զիհունի հովտի արեւմուեան կողերի վրայ գործումէ Սիսը, որ մի փոքրիկ քաղաք է. շինուած զառիվայր ապառաժի լանջին և ստորոտում: Սա էլ մի ժամանակ մայրաքաղաք էր, այստեղ էր Հայաստանի (Կիլիկիայի) թագաւորների նիստը երկու դար շարունակ՝ 1182-ից մինչև 1374-ը, ուր և երեսում են մինչև այսօր Դարբասոի, այն է՝ թագաւորների պալատի մնացորդները: Սիսը գաղարելով թագաւորանիստ լինելուց՝ մնաց կրօնական կեղրոնավայր, նրա մենաստանում գահակալումէ մի պատրիարք (կաթուղիկոս), որին թուրք կտուավարութիւնը կամեցաւ ախոյեան կացուցանել Էջմիածնի ռուսահայտակ կաթուղիկոսին: Նրջակայքի բոլոր եպիսկոպոսները ուղարկում են Սոի եպիսկոպոսապետին իրենց գիւղացիների վճարած տասանորդները: Դէպի Զիհուն իջնող ճանապարհին մի բլրի վրայ կանգնած է Անաղարբա ամուր բերդը, մուսուլմաններին Հային ջարբան, որ Սոից առաջ նոյնպէս հայ թագաւորների աթուանիստն էր և իւր հռումէական աւերակներով համբաւաւոր: Երկու հնագարեան ջրմուղներ, թէև տեղ տեղ կործանուած և զըրկուած իրենց քանդակներից և արձանագրութիւններից, այսուամենայնիւ հոյակապ յիշատակարաններ են և երեսում են ձգուած մօտաւորապէս 12—20 քիլոմետր երկայնութեամբ, մինչև դաշտի վերևի լեռները հիւսիսում և հիւսիս-արեւմուտքում<sup>1)</sup>: Նըրանց բեղմնաւորիչ ջրերը շրջակայքի անապատը դարձել էին անսահման ծառաստան, այնպէս որ տասներորդ դարում կդրի-

1) Texier, Revue Française, 2838;—Carl Ritter, Asien, XIX.

սին կարողանումէր Անապարբայի դաշտերը համեմատել դամասկի «Երախտի» հետ:

Ադամայից արևելք՝ նախկին Մոպառեստը, խաչակիրների Մամիստրան, հայերի և թուրքերի Մսիսը հսկումէ Պիւռամիսսի անցքին, ուր ձգուած է մի իննակամար կամուրջ: Այստեղից արդէն մօտ է թերակզզու հիմքը և Զերէլ-Նուրի կամ Շոյսի լեռներին գահավէժները գծում են երկու աշխարհների՝ Փոքր Ասիայի և Ասորիի՝ բնական սահմանը: Այս միջավայրում խմբուած են ամեն ազգերից՝ թուրք, յոյն, հայ, քուրդ, արաբ, չերքէզ, անսարի, խափշիկ և բոշա: Մոպառեստը յունական աշխարհի վերջին ծայրն է և իւր կրօնների խառնուրդով պատկանումէր միանգամայն թէ Ասորիին և թէ ներքին Ասիային: Իւր Ապոլոնը աւելի Արևելեան բահազ էր քան թէ յունական աստուածութիւն: Այս քաղաքը բոլոր աստուածների համար մի սրբարան ունէր և պաշտողներ: Արա նման էր և Էգէա՞ն (Այս, Լայացցո), «Ալիքների» քաղաքը, որ շինուած էր Ալեքսանդրեակի ծոցի (Հայոց ծոց) հիւսիսում և միախմբել էր Միջերկրականի աւաղանի բոլոր կրօնները: Խաչակիրների սկաներազմների ժամանակ, երբ որ խտախայի ծովագնացները Այսուը գարձրին իրենց գլխաւոր միջերանոցը, նա քրիստոնէական քաղաք դարձաւ: Կիլիկեան նաւահանգիստը՝ որ յաջորդեց նրան, գտնուումէ մի քանի քիլոմետր գէպի արեմուոք, ոչ հեռու Պիւրամոսի բերանից, որ և այժմեան Յումուրթալիկ գիւղաքաղաքն է և որն ուզում են կազել Ագանայի հետ երկաթուղու մի ճիւղաւորութեամբ: որը սակայն հարկ կլինի սպառսազմէ գետի տիղմերից, մզելով գետի ընթացքը գէպի արեմուոք<sup>1)</sup>: Այսուը և Յումուրթալիկը այն նաւահանգիստների թւումն, որտեղից ենթագրուումէ սկսել Միջերկրականից մինչեւ Պարսկական ծոցը ձգուող երկաթուղին: Այստեղով ճանապարհը կերպարի Փոքր Ենչ բայց շինողներին աւելի հեշտ կլինի Ամանոսի Պառիվայրերից երկաթագիծն անցկացնել աւելի դուրան տեղերով:

Զերէլ-Նուրի արևելեան կողերում ծովածոցից հիւսիս գէպի

1) Ed. Dutemple, En Turquie d'Asie.

երկրի ներսերը առաջացող ջրային կամարի ամենավերին ծայրի մօտ երկու ժայռ՝ միացած ու հատաքարի (գրանիտ) գեղեցիկ կամարակապով սեղմզւմեն ճանապարհը նման Գիւլլէկ-բողազին։ Այս էլ մի ուրիշ Ավլիկիայի Դուռնո է, որ կոչւումէ նաև «Անկթամուրի գուռ», «Երկաթի գուռ», «Աւ գուռ» կամ կարա-կափու։ Ո՞չափ մարդիկ են կոսորուել այս նեղ անցքին՝ որ Ասիայի ճանապարհների գուռն է, տիրելու համար։ Կախապատմական ժամանակներից սկսած ոչ մի դար չէ եղել, որ այսուղ ճակատամարտներ տեղի չունենային 4):

## ՄԻԱԲԱՆ.

(ԱՀ Հարունակուի)

4) Ա գ ա ն ա յ ի վ ի լ ա յ է թ ի ք ա ղ ա ք ն ե ր ը ի ր ե ն ց  
բ ն ա կ ի չ ն ե ր ի մ օ տ ա ւ ո ր ա կ ա ն թ ու ե ր ո վ

Աղանա, լստ Գաւը և Մանդրոյի.	45 000	բնակիչ:
Մարաշ.	24 000	"
Տարսոն, լստ Geary-ի.	12 000	"
Հաղին.	10 000	"
Մերսինա, լստ Geary-ի.	6 000	"
Սիս.	5 000	"
Ալբիստան.	3 000	"